

ՈՒՍՑ-Ի իշուացք. աւրուացք. լըւացք.
Տըսրուացք (շնորհուացք):

ՈՒԹԻՒՆ. Տաքութիւն, պաղութիւն, եւ-
այլն:

ՈՒԿ. Այս մասնիկն ալ իւր շման շատ
գործածական է, եւ թէ՛ նուազական, թէ՛ փա-
ղաքշական եւ թէ՛ գերապական նշանակութիւն-
ներ կու տայ: Իշուակ. նազուակ. նուշուակ. սանուակ.
սուսուակ. տաքուակ. պաղուակ. էրուակ. գիրուակ.
փախուակ. խննթուակ. կամօք. կփփուակ. քոր-
տուակ. լըղըճուակ. լփուտուակ. որսուակ. կարմրուակ.
քուրուակ. չարսնուակ, աղբուրակ, մնչուակ. ճաղուակ.
սեւուակ. — կայնուակ, նստուակ: պառկուակ. ան-
ցուկ ու մոռցուկ:

ՈՒՑ. Սեւուց, գեղնուց, ճերմկուց, Ժա-
մուց:

ՈՒՔ. Մաշուք. մաղուք. ծամուք. խմուք
կերուք. խառուք. փշ(ը)ուք. տաշուք. քե-
ուք. թափուք. եւրջուք:

ՈՔ. Փշք. պլք:

2. Չտես. չչաւան. չիպիտու:

2Է. Կրողէք. բերողէք. կարողէք. կա-
ղոնաչէք:

ՎԱՐ եւ ՎԱՐԻ. Հայեմար, քրդեմար
մարդավարի, ամպավարի:

ՑԻ. Անցի, Արեգցի. Կարկըպցի:
այլն:

Ա բացասական մասնիկը Անայ բարբա-
ռին մէջ կ'երեւնայ «անտնէն կու գաս», բա-
ցատրութեան մէջ, որ կը նշանակէ «գոն միայն
անիրազեկ ես», ինչպէս ունինք «տեղ» բա-
ռն «անտեղեակ», նոյնպէս «տուն» բառէն
«անտնէն», Արդէն «տուն տեղ», «տնով տե-
ղով», ոճը կայ, ցոյց տալու թէ այդ երկու բա-
ռերը հոմանիշ նկատուած են:

«Անտունի» բառն ալ բացասական մաս-
նիկն ունի, եւ կը թուի սկզբնապէս նշանակած
ըլլալ «տունէն զրկուած կամ պանդուխտ մար-
դու» երգը:

«Անտնտիլ» բայն ալ ան-տուն-տ-իլ է, որ
է յանկարծական եւ վաղանցիկ կերպով մոռ-
նալ, չտիշել, չգիտնալ գիւրի բան մը. «ինչու
անտնտեցար, այսինքն, ինչպէս կ'ըլլայ որ ան-
տեղեակ, անտիշող կը գտնուի այս պահուս»:

Այս տարօրինակ ածանցեալներու շարքին
մէջ է նաեւ «անառը», «անառը քաշու եր է»:

25. Այս գաւառականը բարդ բառերուն
— յօդակապը կը գործածէ սահաւաթիւ օրի-
նակներու մէջ, ինչպէս մտամոլոր, խնտամոլիկ,
մարդամօտ, մարդառող, թատրփորիկ, ճոռմատ,

քնքապապ, մեծաթոտ, երբեմն ա-ի փոխան լ կը
դնէ, ինչպէս սանձմար, հաստըլլի, տաշաւքեր,
Իսկ բարդերուն ամենամեծ մասը առանց յօդա-
կապի կը կերտէ, ինչպէս բուխարտ, խոտկուս,
կերկուս, ընկզմէջ, ոտնտախտակ, մածնապուր,
ըրծաղիկ, վերկար, մեծգլուխ, կախչուխ, կամար-
ընթրի, սեւընթրի. թուխաշուի, սեւաշուի.
բարակպուններ. բացբերան, թուլբերան, անուշ-
թերնակ. ամուրբերես, սեւերես, ճերմակերես.
ճերմակմօրուք, երկանմօրուք. ծուռըլլի, եր-
կանըլլի, լանկոնակ. ոսկիփորիկ, սեւըլեր:

Բարդութեան մէջ ածականը գոյականին
նախագիտակ կը դնէ, ուստի տաճ. «կէօղի աչքը»
բարդին նիւթական թարգմանութիւնն է «աչքը
բացը, որուն հայ ձեւը պիտի ըլլար «բացա-
շուի», աւելորդ հոմանիշ մը «արթուն» եւ
«աշաւուրջ» բառերուն:

Հետաքրքրական է նկատել թէ բարդումը
երբեմն յօգնակի ձեւին վրայ ալ կ'ընէ այս
բարբառը — «Թուխաշուի» «սեւընթրի»
«բարակպուններ» «սեւըլեր»:

26. Շարագասութիւնը ճկուն է այս բար-
բառն մէջ, եւ շեշտին պահանջման համեմատ
բառերուն դիրքը փոխել գիտէ: Օրինակի հա-
մար բաղադրեալ ժամանակներուն մէջ եմ, ես,
է, էի, էիր, էր, կրնան աներեւոյթ անցեալէն
առաջ գրուիլ շեշտը զգալի ընելու համար. —
Նուս կերեր ես. կերեր իմ. — 2փմ կերեր,
Աղբարտ քեզ ուզեր է, տ'երթաս. — Աղբարտ
քեզ է ուզեր, դուն տ'երթաս: Ցատտ կու
կանչէ քեզ. — Ցատտ քեզ կու կանչէ. —
տատտ քեզ է կանչէր: — Ես ալ քարի մը
վրայ նստեր էի. — ես ալ քարի մը վրայ էի
նստեր:

(Էդրուսիէի)

Ս. Ս. ԳԱՐԻՆԵԼԵԱՆ



Ի Ն Ա Գ Ի Ց Ա Կ Ա Ն

ԱՆԻ ԳՆԱԻՄՆԵՐԸ

Բազրատունեաց մեծահոգեակ մայրա-
քաղաքի ուսումնասիրութեան գործի մէջ
1894 թուականը կազմու է մի նոր դա-
րադուխտ Մինչեւ այդ՝ Մինի բազմաթիւ
այցելուները, որոնց թուում եւ օտարազգի
գիտնականներն ու ճանապարհորդները, ու-
նէին իրանց աչքի առջեւ այն ամենը, ինչ-
գարաւ որ աւելանքները, անխնայ յափշ-

տակութիւններից յետոյ մնացել էր հողի մակերեւոյթի վրայ: Բայց մեռած մայրաքաղաքը իր ընդարձակ շրջականերով աղաքակուճ էր այցելուի երեսին որ հողի տակ ծածկուած է մի աւելի մեծ եւ հետաքրքրական քաղաք: Միայն այդ հողածածկ, անյայտ քաղաքի մասերը երեւան հանողն էր կարող նոր խօսք ասել Մշիի անցեալի մասին:

Լուսջին անդամ այս ճշմարտութիւնը գործնականապէս ապացուցողը եղաւ յայտնի հայազէտ պրօֆէսոր Կ. Մառ: 1894ին նա առաջինն էր, որ Մշիի ուսումնասիրութեան գործի մէջ մտցրեց բրիչը: Լւ այդ քանիչ գործիքը կարողութիւն տուեց Պ. Մառին մի շարք նոր խօսքեր ասել Բագրատունեաց մայրաքաղաքի մասին: Եւ յորքոյր յարգելի գիտնականը սկսեց շատ համաստ, համարեա շնչին դրամական միջոցներով: Տեղի ունեցան մի քանի թեթեւ պերումներ, որոնք, սակայն, վերին աստիճանի հետաքրքրական նիւթեր երեւան հանեցին:

Եւ յ առաջին փորձին հետեւեց 10 տարուայ ընդմիջում, Բայց պրօֆէսոր Մառ չը մոռացաւ Մշին եւ 1904 թուականի ամառը վերականգն իր գիտնական աշխատանքները աւերականների մէջ: Վարժը ընդհանուր հետաքրքրութիւն եւ համակրանք շարժեց: Պ. Մառ հայ հասարակութիւնից նպաստներ ստացաւ, որոնք եւ միջոց տուին նրան այնուհետեւ ամեն ամառ համաստ չափերով առաջ տանելու Մշիի պեղումները: Մինչեւ այսօր հայազէտը հինգ ա. մաս ամենայն անձնու իրութեամբ, պահամարհելով բոլոր անպատահանքանքները, բոլոր անձնական զոկանքները, անընդհատ առաջ է տարել գիտութեան գործը: Հետեւանքները ահագին են: Գր նայած որ պեղումները մեռած քաղաքի եւ նրա շրջակաների միայն մի շատ աննշան մասն են շօշափել, այսօր արդէն ահագին նիւթ է դիզուել՝ Մշին ուսումնասիրելու, ճանաչելու համար: Արեւի է ասել առանց չափազանցութեան մէջ ընկնելու թէ իւրաքանչիւր օր բերում է նոր յայտնութիւններ: Վիտամականի ղեկավարութեամբ գործող բրիչը հրապարակ է նետել մեր հին ղեղարուեստի, ճարտարապետութեան, հասարակական եւ բնաշինական կենսաբանութեան համար կարեւոր փաստերի մի ամբողջ շեղձակցոյ:

Փոքր ի շատե մանրամասն տեղեկութիւններ տալ հնդամեայ աշխատանքների մասին անհնարին է մի համառօտ յօդուածի մէջ: Էջիշատակները այստեղ գլխաւոր գործերը:

1. 1904ին պ. Մառ Մշիի «մզկիթ», անուանուած շինութիւնը վերանորոգել է եւ դարձրել թանգարան, ուր այժմ պահվում են պեղումներից հանած բոլոր առարկաները, արձանագրութիւնները, զարդաքանդակները եւ այլն: Թանգարանը պահպանվում է մեծ խնամքով: Լմեն ինչ ցուցակագրուած է, ցուցակը տպագրուած է: Թանգարանի մի մասն էլ կազմում է մատենադարանը, ուր պ. Մառի ջանքերով արդէն բաւականաչափ գրքեր են հաւաքուած՝ հայերէն եւ օտար լեզուներով: Լւերանքների ամայի քաղաքում, ուր թագաւորում են միայն կարիճները, օձերը եւ մորմերը, այդ բարեկարգ հիմնարկութիւնը վերին աստիճանի միջիթարական տպաւորութիւն է թողում այցելուի վրայ: Եւ յ 1904ին պ. Մառ պեղումների կատարեց քաղաքի արեւմտեան ծայրերում, ուր եւ երեւան եկան մի շարք, ազգատիկ տներ իրանց աւանդական թոնիրներով:

2. 1905ին պ. Մառ սկսեց պեղել այն ահագին հողակոյտը, որ գտնվում էր Նաղդկաձորի եզրին: Էջնուելով Լաղիկի նկարագրութեան վրայ, ենթացրել էր որ այդ կոյտը պիտի ընի Վազիկ Լ. ի շինած փառաւոր եկեղեցին, որի օրինակը վերցրած էր Եւթիմիածնի Օռարթիւնոց եկեղեցուց: Պեղումները միանգամայն արդարացրին ակնկալութիւնները: Բայցվեց Վազիկի հոյակապ եկեղեցին, որ եւ առատ նիւթ տուեց Օռարթիւնոցի սքանչելի ճարտարապետութեան մանրամասները եւ դորմանանի գաղտնիքները փաստօրէն ճշտելու համար: Վազիկի այդ տաճարը շատ հարուստացրեց Մշիի թանգարանը. գտնուած բազմաթիւ իրերի, սքանչելի քանդակների մէջ ամենաթանկանկարիչ Վազիկի քարէ մեծ արձանն էր, որ ահագին հետաքրքրութիւն տարաւեց նոյն իսկ շրջակայ հայ գիւղական տղաքանակութեան մէջ եւ աւելի եւս ստուարացրեց ամեն կողմից Մշի գնացող այցելուների խմբերը:

3. 1906ի ամառը պ. Մառ շարունակեց եւ աւարտեց Վազիկի տաճարի պե-

դու:մները: Այդ ժամանակ էլ Ռազուեցի հայերի մի համեստ նուէրով Առաքելոց եկեղեցու մինչեւ այժմ կանգուն մնացած նախագաւիթը, որ Անիի չքնաղ մնացորդներէց մէկն է, արտառուէց վերջնական քայքայման վտանգէն: Ղարտապարպետ Իս. Թաւրամանեանի հսկողութեամբ վերաշինուեց վտանգուած մասը:

4. 1907ին պ. Մառ ձեռնարկեց մի աւելի մեծ աշխատութեան: Հին ժամանակներէց ոյցելուների ստեղծած մի կարծիք էր թէ Ռազարառուներին արքունիքը այս իսկ շինութիւնն է, որի մնացորդները այժմ բարձրացած են Ղաղկաձորի եզերքին: Պրոֆ. Մառ առաջինն էր, որ գրականապէս յայտնեց թէ այդ ենթադրութիւնը անհիմն է եւ արքայական պարտոր պէտք է որոնել ուրիշ տեղ: Այդ որոնումները, որոնց մէջ մեծ գեր է կատարել պ. Թաւրամանեանը, ցոյց տուին Միջնաբերդի գլուխը պատկող ահագին աւերակների կոյտը, ուր միայն մի փոքրիկ եկեղեցի էր մնացել. մնացածը ջարդուած, տրորուած էր եւ ներկայացնում էր մի քարակալու, ուր նշմարվում էին սենեակների շարքեր (ի հարկէ, միանգամայն փրուած) եւ ուր բարձր ցցուած էր մի սիւնազարդի բեկորը, որ մինչեւ այդ համարվում էր եկեղեցու կտոր: — Ահագին աշխատանք եւ զրաւանգան մեծ միջոցներ էին հարկւանոր այդ ընդարձակ աւերակները պեղելու եւ մաքրելու համար: Պրոֆ. Մառ 1907ին կա, բողապաւ կատարել այդ գործի մի մասը միայն, մնացածի վրայ աշխատում է այս ամառ:

Ռազարառուներաց արքունիքի պեղումները նոյնպէս խոշոր նորութիւններ երևան հանեցին: Այստեղ յիշատակները միայն այն, որ երևան հանած շինութիւնների մնացորդները շատ քիչ չափերով են Ռազարառուներն: Պալատը ներկայացնում է այս ախրապետութիւնները, որոնք միմեանց ետեւից յաջորդեցին Ռազարառուներին: Այնուամենայն, Ռազարառուի ցեղերի գլխաւորներն էլ Միջնաբերդի այդ պալատում էին ապրում: եւ այսօր կարելի է տեսնել այս վերաշինութիւնները, որ կատարել են նրանք պալատում կաւէ կոպիտ, անտաշ, ծուռ պատերով:

1907ին պ. Մառ ուշադրութիւն դարձրեց եւ Անիի շրջակայքում, Ախուրեանի

ձախ ափին գտնվող մի շատ հետաքրքրական հնութեան վրայ: Պրոֆ. Պառլեւ աւելած տեղում եղած եկեղեցին է դա, այժմ աւերակ: Պ. Մառ, ինչպէս մանրամասն բացատրեց անցեալ մայիսին Խիֆլիում կարգացած իր դասախօսութեան մէջ, համոզուած է որ այդ եկեղեցին (գտնուած արձանագրութեան մէջ այդ տեղը անուանուած է Արեւոյք) իր սկզբնական հիմնարկութեան հանգամանքներով, ասել է՝ իր յատակագծով եւ հիմքերով ներկայացնում է Պ. — Օ դարերի հայ եկեղեցու տիպը եւ այդ կողմից մեծ աղբնութիւն կայ նրա եւ Տիկորի եկեղեցու մէջ, որ բախտի բերմունքով այժմ էլ դեռ կանգուն է, թէեւ փլուելու վտանգին ենթարկուած:

Միջնաբերդ, 1907ին աշնանը, ճարտարապետ Թաւրամանեանի փորձնական փոքրիկ պեղումով երևան հանուեցին Առաքելոց եկեղեցու մօտ մի հնոյնապա պալատի մնացորդները: Բոլոր նշանները ցոյց են տալիս որ դա Օաքարէ Սպասարի (ԺԳ — ԺԳ դար) պալատն է: Պ. Մառ այս ամառ այդ շատ հետաքրքրական աւերակներն էլ պիտի բաց անէ:

Հետաքրքրական նեք տալում այն պատճառով, որ մինչեւ այժմ եղած մանրագին ուսումնասիրութիւնները եւ պեղումները Անիի բարգաւաճման երկու որոշ շրջաններ են ցոյց տալիս — ա) Ռազարառուների շրջան, որ ամենահինն է իր ուրոյն ճարտարապետական ոճով եւ պարզութեամբ եւ բ) Օաքարեանների շրջան, որ սկսվեց Ռազարառուների անկումից մօտաւորապէս մի դար յետոյ: Ռազարառուներին յաջորդեցին, ինչպէս յայտնի է, նախ յոյները (կարծ միջոց) եւ ապա Շէդդատեան ցեղը, որի ժամանակ մայրաքաղաքը սկսեց գիմել դէպի անկում: Աղքատութեան եւ անկման այդ շրջանին հետեւում է Օաքարէ Սպասարի եւ նրա յաջորդների ժամանակը, երբ Անի վերակենդանանում է աւելի մեծ չափերով: Այդ ժամանակուայ շինութիւնները իրանց գեղեցկութեամբ եւ զարդաքանդակների շաղկապով փարթամութեամբ ցոյց են տալիս թէ որքան բարձր էր ան-

Վ. Լ. Անտիսեան «Հանգեալ Ամսօրեայի» վերին համարի մէջ (ՀԱՍ. 1908, հր. 222) սխալմամբ կարծել է թէ Երեւոյքի եկեղեցին Տիկորի եկեղեցին է: Երեւոյք՝ Գեղեցիկի հին անունն է:

ցինների քաղաքակրթութիւնը, բարեկեցութիւնը: Այժմ եթէ ձշուռի որ երևան հանած պարտոր Օաքարիային է, մենք մի նոր եւ մեծ փաստ կ'ունենանք Օաքարեան փառաւոր շրջանը վնահատելու համար:

Ահա թէ որքան բաներ է տուել պրօֆ. Մառի անխնջ գործունեութիւնը Անիի մէջ: Այդ աշխատանքները մինչեւ այժմ ցոյց են տուել որ գործը միայն սկսվում է, որ պեղելու եւ քրքրելու տասնեակ տարիների գործ կայ մեր առաջ: Պեղումները հաստատում են որ Անին հնագիտական մի քանի շերտերից է կազմուած. քաղաքը աւերուել է շատ անգամ եւ նորոգուել է հին աւերակների վրայ: Պետնի մակերեսային մօտ գտնվում է վերջին ժամանակների շերտը. իսկ հինը գտնելու համար պէտք է փորել այդ շերտն էլ եւ խոր գնալ: Հպարտեան գործն: Իսկի այդ՝ այժմ այլ եւս ոչ որք համար է կարող տարակուսել լինել որ Անի քաղաքը այն չէ, ինչ այժմ պարփակուած է պարիսպների մէջ: Այս պարսպափակ տարածութիւնը չափազանց փոքր է մի մեծ քաղաք տեղադրուելու համար: Այդտեղ գտնվում էին իշխանական տները, վարչական հաստատութիւնները, շուկան, մանաւանդ տոհմային գերեզմանոցները իրանց փոքրիկ մատուռներով: Իսկ ուր էր բնակվում ժողովուրդը, ուր էր խմուած Անիի բազմամարդութիւնը: Այդ հարցերի պատասխանը պէտք է որունեն Անիի պարիսպներից դուրս, այն ընդարձակ դարբի վրայ, ուր այժմ էլ բնակութիւնների շատ հետքեր են երևում, պէտք է որունեն Անիի ձորերում, ուր հարիւրաւոր քարայրեր կան եկեղեցիներով, գերեզմանոցներով: Այս բոլոր տեղերը պէտք է պրօպետ ուսումնասիրել բոլոր օգնութեամբ:

Հայ հասարակութիւնը կարող էր լինի մի այսպիսի մեծագործութիւն կատարել: Պ. Մառ այս տարի յայտարարեց որ ինքը ստիպուած է ընդհատել Անիի պեղումները, որպէս զի կարողանայ մշակել այդ հաւաքած նիւթերը, լիակատար գեղեցումներ պատրաստել մինչեւ այժմ արածների մասին: Մենք վախճում ենք որ այդ ընդհատումը սառնութիւն մտցնէ Հայ հասարակութեան մէջ եւ մարէ այն վառ հետաքրքրութիւնը, որ կայ այժմ շնորհիւ պ. Մառի լափա-

զանց եռանդոտ եւ արդիւնաւոր գործունեութեան:

Ի վերջոյ յիշատակելի է պ. Մառի եւ մի այլ գործը: Այս աշխատակիցը Անիում հանդիսանում է ճարտարապետ պ. Խորոս Խորամանեանը, որ աւարտել է իւ ուսումը Կ. Պոլսի գեղարուեստական բարձրագոյն դպրոցում: Միայն պ. Մառն էր, որ գնահատեց նրա եռանդն ու տաղանդը, խրախուսեց նրան, օգնութեան հասաւ: Հայ հասարակութեան կողմից անուշադրութեան մատուած կարող ճարտարապետը հաւաքել է ձեռն եւ հարուստ ճարտարապետական նիւթեր, հարիւրաւոր թիւթերի վրայ: Անին վերակազմութիւնների միջոցով է պ. Մառ ներկայացրել է Խորամանեանի գործերը Պետերբուրգի գեղութիւնների շնորհակցին, որ եւ անցեալ մայիսին պատկեր է այդ գործերը պատուաւոր վկայականով:

Արեմա, 1. Օգոստ. 1908:

ԼԵՕ



Ս Ա Յ Ե Ն Ա Ռ Օ Ս Ա Կ Ա Ն

Հ. ՌԱՐԱՅԵԱՆ. — Լէօ (Մաքեղ Բաբելոնեան). Կենսագրական-գրական ակնարկ նրա 25ամեայ յոբելեանի առթիւ, Թիֆլիս, 1908. 80 էջ 26:

Պ. Բարայեան կարեւոր պէտք մը կը փութայ գտնել իւր այս համեստ աւտորով լրացնել. ժողովրդական ժիր մշակին հրապարակական յոբելեանի առթիւ պատշաճ էր օր օրուան հետոսին կենքի վարադրը բացուի, արժան է որ ժողովրդեան ընդարձակ խաւերուն ծանօթացուի անոր կենքն ու գործունեութիւնը իւր իսկական գոյներով: Այսպիսի հրատարակութիւն մը սակայն լոյս չտեսնելուն պատճառաւ այս համառօտ գրութեան պէտքը զգալի կ'ըլլար, այս պակասը լրացնել կը ջանայ հեղինակը Պ. Բարայեանի իւր այս աշխ. նպատակին հասած ըլլալը գոհունակութեամբ կ'երաշխաւորենք մեր կողմանէ: Հաճոյական է գործը իւր պարզութեամբ, որուն հակիրճ բովանդակութիւնն արժան է անդիսի ընթերցողաց ծանօթացնել:

Լէօ ծնաւ է 1860 Ապրիլ 14ին Էւսեւ խեղճուի թաղերէն միոյն մէջ, աղքատիկ ծնողաց զաւակ իւր կրթութեան եւ գաստաբար-